ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«08» օգոստոսի 2017 թվականի № 96-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017թ. ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2016 թվականի նոյեմբերի 11-ին ստորագրված «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր. Երկրորդ փուլ (ընթացիկ գործառնություններ)» վարկային համաձայնագրով նախատեսված երկրորդ մասնաբաժնի ստացման համար անհրաժեշտ գործողությունների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» №353-Ա որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցի 1.1 կետի հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

   1) Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից իրականացվելիք՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի նախագծում ներառման համար առաջարկվող ծրագրերի կատարողական հիմնական ցուցանիշները՝ համաձայն հավելված №1-ի,

   2) Ծրագրային բյուջետավորման համատեքստում վերանայված էլեկտրա-էներգետիկ ոլորտի ռազմավարությունը՝ համաձայն հավելված №2-ի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ